ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՌՑԱՆՑ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Սույն հրահանգի նպատակն է սահմանել դիմորդի գործողությունները Zoom հարթակում ստեղծված հատուկ քննասենյակում ՄՊՀ մասնաճյուղի Երիցյան վարժարանի՝ 2020-2021 ուստարվա ընդունելության թեստավորման առցանց գործընթացի ժամանակ:

1. Մինչ ընդունելություն թեստավորումը: Ընդունելության թեստավորումից առնվազն 1 օր առաջ դիմորդը պետք է գրանցված լինի Zoom հարթակում իր անուն, ազգանուն, հայրանունով և ընդունելությանը մասնակցելու առցանց դիմումի հետ վերբեռնված լուսանկարով, լինի քննասենյակի անդամ, իսկ նրա աշխատատեղում պետք է լինեն.

ա. համակարգիչ (պլանշետ, սմարթֆոն), որը պետք է ունենա ներկառուցված կամ առանձին տեսախցիկ և խոսափող, շատ ցանկալի է նաև համալրող սարքեր՝ տպիչ և սկաներ,

բ. տեսախցիկ (թույլատրելի է նաև բջջայինի տեսախցիկը):

2. Թեստի առաջադրանքը կատարելիս: Թեստավորման սկզբից ոչ ուշ, քան 30 րոպե առաջ դիմորդը պետք է մուտք գործի քննասենյակ՝ իր հետ ունենալով անձնագիր (ծննդյան վկայական), կապույտ գույնի 3 գրիչ, սպիտակ թղթեր՝ A4 ֆորմատի (21սմ X 29,7 սմ), գրանցվի ընդունող հանձնաժողովի կողմից և հետևի կազմակերպիչների հրահանգներին: Քննությունը սկսելու հրահանգից հետո մուտքը քննասենյակ դադարեցվում է: Ընդունող հանձնաժողովի անդամը բացում է առաջադրանքների փաթեթը և քննասենյակի ընդհանուր զրուցարանում նշում տվյալ օրվա տարբերակի հղումը:

Դիմորդը տպում է թեստը, դնում աշխատասեղանի վրա և սկսում կատարել առաջադրանքը: Տպիչի բացակայության դեպքում դիմորդը առաջադրանքը կարդում է համակարգչի (պլանշետի, սմարթ-ֆոնի) էկրանից:

Աշխատանքը կատարվում է A4 ֆորմատի սպիտակ թերթերի վրա, մաքրագրության և սևագրության թերթերը համարակալվում են առանձին, սևագրության թերթերի վրա նաև «սևագրություն» նշում է կատարվում:

Առաջադրանքի կատարման ընթացքում տեսախցիկը պետք է տեղադրված լինի այնպես, որ դիմորդի դեմքը, ձեռքերը, աշխատասեղանը և համակարգիչը լինեն տեսախցիկի տեսադաշտում:

3. Թեստի առաջադրանքն ավարտելուց հետո: Աշխատանքի ավարտից հետո լրացուցիչ 30 րոպե է հատկացվում այն սկանավորելու (լուսանկարելու) և test@msu.am էլեկտրոնային փոստին ուղարկելու համար:

Հարցեր ունենալու դեպքում դիմորդը կարող է քննասենյակի ընդհանուր զրուցարանի միջոցով դրանք ուղղել հանձնաժողովին և սպասել պատասխանի:

Ամբողջ գործընթացի ժամանակ դիմորդը միայնակ պետք է գտնվի աշխատասենյակում, իսկ տեսախցիկը և խոսափողը պետք է միացված լինեն: Միայն հանձնաժողովի կողմից աշխատանքը ստանալու վերաբերյալ հավաստիացումից հետո դիմորդը կարող է հեռանալ քննասենյակից:

Թեստավորման ընթացքում դիմորդը աշխատավայրից կարող է հեռանալ միայն բացառիկ դեպքերում հանձնաժողովի համաձայնությամբ: Այդ ընթացքում տեսախցիկը և խոսափողը չպետք է անջատվեն: